

Հայրապետ Մարգարյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՏԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԽI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XII ԴԱՐՈՒՄ

Հայոց պատմություն, Հարավային Հայաստան, XI- XII դարեր, Տարոն,
Կասպուրական, Սասուն, քաղաքական գործընթացներ

Զարգացած ավատատիրության դարաշրջանում հայոց պետականության ճակատագիրը ծիշտ ըմբռնելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի քաղաքական գործընթացների պարզաբանումը առաջին հերթին Հարավային Հայաստանում: Խնդիրն այն է, որ երկրի այս հատվածում տեղական իշխանական տոհմերը ավելի վաղ են զիջել դիրքերը, քան իյուսիսային շրջաններում, ինտևարար այս երևույթը համապատասխան հետազոտության ենթարկելու կարիք է գգացվում:

1071 թվականին Մանազկերտի ճակատանարտում Բյուզանդիայի կրած աղետալի պարտությունը ծայրաստիճան լարված վիճակ առաջ բերեց Հարավային Հայաստանում, որտեղ նախկինում առանձնապես ամուր էին կայսրության դիրքերը: Փաստ է, որ երկրի հարավից էր սկսվել հայկական երկրամասերի միացումը Բյուզանդական կայսրությանը: XI դարում կայսրությունն, իհարկե, այլևս ի զորու չեր օգնություն ցույց տալ իր երեննի ստորականերին, որոնք ավանդույթի համաձայն պաշտպանում էին Բյուզանդիայի արևելյան սահմանները: XII դարում, որպես կայսրության հետ դեռևս առկայժող կապի վկայություն, մնում էին միայն Հարավային Հայաստանի տիրակալների բյուզանդական տիտղոսները:

Սելջուկյան արշավանքներից հետո Հարավային Հայաստանում դեռևս գոյատևող քաղաքական կազմավորումներից առաջինը պատմական ասպարեզից հեռացավ Տարոնի Մամիկոնյանների իշխանությունը: Նրա տիրակալներից Տաճատի որդի Չորտվանելը («մեծի տէրութեան իշխանի Տարոնյ եւ ամենայն Հայոց Չորտուանելի» որդույ Տաճատայ քաջի Մամիկոնյ»)¹ թեև 1079 թվականին հպարտությամբ էր գրում սելջուկ-թյուրքերի դեմ մղած իր մարտերի մասին («իրամանաւ ինքնակալացն Յունաց՝ ոչ զանգիտեցի ի սպառնալեաց եւ յարշաւանաց ազգին Խսմայելացոց»)², սակայն հետմանազկերտյան տարիներին, հավանաբար, դադարել էր Բյուզանդիայի ստորական լինելուց: Նրա որդի Ապլասաթի, որ «էր այր քաջ եւ պատերազմող

¹Տե՛ս Դ. Ալիշան, Հայապատում, հատ. Բ, Վեճետիկ, 1901, էջ 396:

² Նույն տեղում:

ընտիր»¹, ռազմական գործունեությունը XII դարի սկզբին արդեն ծավալվում էր Տարոնից հեռու: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ նա նախ ծառայում էր Գող Վասիլի գործերում, ապա հարել էր Խաչակիրների առաջնորդներից Բալդուին Ֆլանդրացուն և Զուլինին, բայց հետո նորից վերադարձել էր Վասիլի մոտ: 1112 թվականին Ապլասաթը զիկվեց սելջուկ-թյուրքերի դեմ մարտերից մեկում, Լևոն Ա Ռուբինյանի իշխանության տարածքում²:

Հայ իշխանական տները մեծ դժվարությամբ էին դիմագրավում սելջուկյան արհավիրքներն անգամ երկրի հարավ-արևմտյան այն գավառներում, որոնք ամրացվել էին դեռևս արաբա-թյուզանդական հակամարտության ժամանակաշրջանում: Մասնավորապես՝ Զորրորդ Հայքի գավառներից Ծոփք Շահունյացը, Դեգիքը, Գավրեքը և Հանձիտը մտնում էին արաբա-թյուզանդական սահմանային ամրությունների գոտու (սուլուր) մեջ³ և թշնամիներին հակահարված հասցնելու հարուստ փորձ ունեին: Այդ գավառները նաև համարվում էին հայ-քաղկեդոնականների՝ ծաթերի հոծ բնակության գոտի, որը թյուզանդացիները հետևողական քաղաքականությամբ ջանում էին դարձնել իրենց արևելյան պատվարը⁴: Այստեղ էին գտնվում թյուզանդական Մեսոպոտամիա (Միջագետք), Ասմոսատ (Արշամաշատ) և Խոզան բանակաթեմները: Ինչպես պարզվում է Սամվել Անեցու մի վկայությունից, Դեգիք գավառը, որտեղ XII դարում իշխում էր Կամենասյանների կամ Կեկավմենոսների ընտանիքը, գրավել էր Թեռփիլոս կայսրը (829-842)⁵: Այս տոհմի ներկայացուցիչներից, որոնք գգալի դեր են խաղացել թյուզանդիայի և Հայաստանի XI դարի պատմության մեջ, հատկապես նշանավոր է «Խորհուրդներ ու պատմություններ» աշխատության հեղինակ Կեկավմենոսը⁶: Նրա պապը տոպարքես (կիսանկախ կառավարիչ) էր «Տորին» գավառում⁷, որի անվանումը, Հրազ Բարթիկյանի կռահմանը, սրբագրելի է «Տեկես»-ով, այսինքն՝ Դեգիս-Դեգիքով⁸: Այն Կամենասյանների ընտանիքին էր անցել, թերևս, X դարի երրորդ քառորդում⁹, և տոհմը պահպանել էր վերահսկողությունը այդ գավառի մի մասի նկատմամբ, Սղուկ կենտրոնով¹⁰, ընդհուպ մինչև XII դարի 80-ական թվականները:

¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 310:

² Նույն տեղում, էջ 310-311, 325:

³ Տես Ա. Տեր-Ղևոնյան, Արաբական սահմանային ամրությունների գոտին (սուլուր), «Պատմաբանական հանդես», 1981, № 2, էջ 134-148:

⁴ Տես R. M. Бартикан, О византийской аристократической семье Гаврас, II, «Историко-филологический журнал», 1987, 4, с. 184-193:

⁵ Տես Սամուել Անեցի, Հայաքմունը ի գործ պատմագրաց յաղագ գիւտի ժամանակաց անցելոց միջեւ ի ներկայա ծայրադասադ արարեալ: Բնագիրը կազմեց Անահիտ Հայրապետեանը, առաջարանը Կարեն Մաքենուսեանի, Երևան, 2011, էջ 111:

⁶ Տես Սովետի Հայաստանի պատմությունը, 1972.

⁷ Տես նույն տեղում, էջ 171:

⁸ Տես H. Bartikian, La généalogie du Magistros Bagarat, Catépan de l' Orient, et des Kékauménos, Revue des Études Arméniennes, t. II, Paris, 1965, p. 268-272:

⁹ Տես Սովետի և ռազմական պատմությունը, 1972, էջ 421, պր. 400:

¹⁰ Սասունի Թօռնիկյանների 1169 թվականի հիշատակարանի, որը միակ աղբյուրն է XII դարի Կամենասյանների մասին, վերջին հրատարակությունում (տես Հայերեն ծեռագրերի հիշատակարանները).

Կամենասյանները, որոնք խնամիական կապեր էին հաստատել Հարավային Հայաստանի տիրակալներից Սասունի Թոռնիկյանների հետ¹, հաջողությամբ էին դիմագրավում փորձությունները, բայց XII դարի վերջին, երբ նոյնիսկ մահմեդական իշխանությունները կուլ գնացին Այուբյաններին ու Իկոնիայի սելջուկյան սուլթանությամբ, Կամենասյանների հետագա գոյատևումը, թերևս, անհնարին էր դարձել: Սահմեդական միջավայրի ուժգնացող ազդեցությունը ընդգծված երևում է, եթե Կամենասյանների մինչև այդ ակնհայտ հունաշունչ անվանումները (Կամեն, Կադակալոս) համադրում ենք XII դարի կեսերի և դարավերջի ներկայացուցիչների՝ նախ «չեզոք» (Գրիգոր), ապա բացահայտ արևելյան (Շահնշահ, Շահմելիք) անձնանումների հետ²:

Հայ-քաղկեդոնականներով էին բնակեցված նաև Եփրատի միջին հոսանքում գտնվող այն տարածքները, որոնք անգամ XIII-XIV դարերում շարունակում էին պատկանել Խավասների (Ղավրասների) հայկական ընտանիքին³:

Այսպիսով՝ Հայաստանի հարավային ու հարավ-արևմտյան գավառներում երկրի բնիկ տերերի քաղաքական իշխանությունը XII դարում որպես բացառիկ երևույթ էր հանդես գալիս: Ընդ որում, այդ տիսուր վիճակը մեծապես պայմանավորված էր նախորդ դարերի ընթացքում Բյուզանդական կայսրության իրականացրած նպատակաւաց քաղաքականությամբ, որի նպատակը գավառները հայկական իրականությունից կտրելն ու հեռացնելն էր: Այս առումով բնութագրական փաստ է, որ բյուզանդացիները շարունակում էին կառչած մնալ այդ գերխնդրին անգամ XI դարի վերջին-XII դարի սկզբին⁴, երբ բյուզանդական ծրագրերի լիակատար ձախողումը բացահայտ էր դարձել:

Կացությունը նոյնքան ծանր էր Վասպուրականում և Սասունում, որտեղ ևս հայ ավատատերերը մահու ու կենաց պայքար էին մղում իրենց դիրքերը պահպանելու համար:

Նախկին Վասպուրականի թագավորության մի մասում՝ Ամյուկ ամրոցի շրջակայքում և Աղթամար կղզում, XI դարում իշխում էին Խեղենեկյանները, որոնք, հավանաբար, Վասպուրականում մնացած Արծրունիներից էին սերում: XI դարի վերջին և XII դարի սկզբին տոհմի գլխավոր Արդուլմսեհը զգալիորեն ամրապնդեց իր բազմանդան ընտանիքի դիրքերը⁵: Նրա որդիներից Դավիթը 1113 թվականին հոչակվեց հայոց կաթողիկոս, թեև այդ նոր հոգևոր կենտրոնի իշխանությունը Վասպուրականից դուրս չէր

Ե-ԺԲ դր., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 196) բերդանունը տրված է «Ուղուկ» ձևով: Քանի որ «Աշխարհացոյց»-ի համաձայն՝ Դեգիրի նշանավոր բերդերից էր Սոկը, իսկ Սոկ-Սղուկ առնչությունն ակներև է (տես Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 107), ապա ավելի ճիշտ է թվում «Սաղուկ» ընթերցումը (տես Դ. Ալիշան, Աշվ., էջ 394):

¹ Տես Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դր., էջ 196:

² Տես նոյն տեղում:

³ Տես Բ. Մ. Բարտիքյան, Օ վիզանտիյской аристократической семье Гаврас, III, «Историко-филологический журнал», 1988, № I, с. 163-169:

⁴ Տես Պողոս Տարոնացի, Թուղթը ընդ դեմ Թեոփիստեայ հոռոմ փիլիսոփային, Կ.Պոլիս, 1752:

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմության տաճան Արծրունեաց, քննական բնագիրը, առաջարանը և ծանրագործությունները Ս. Դարրինյան-Սելիքյանի, Երևան, 2006, էջ 339-341: Վասպուրականում նրան նախորդել են Խեղենեկ Ա-ն, Խեղենեկ Ա-ի որդի Թոռնիկը և թոռ Թադեոսը:

տարածվում: Փաստորեն աշխարհիկ ու հոգևոր իշխանության զուգակցումն ու կենտրոնացումը միևնույն ընտանիքի ներսում պարոնտերությունը, որը բնութագրական երևությունը էր դառնալու ամբողջ Հայաստանում հետագա դարերում, առավել վաղ տարածում ձեռք բերեց հենց Վասպուրականում: Աբդուլմատիկ գլխավոր ժառանգորդը Ստեփանոս-Ալուգ «պրոտոկոլապաղատ»-ն («պրոտոկոլապաղատ») էր¹, որը բազմակողմանի գործունեությունը էր ծավալել 1121 թվականից հետո²: Այնուամենայնիվ Խեղենեկյանների իշխանությունն ի վիճակի չեղավ խուսափել շրջակա հայ ու օտար քաղաքական կազմավորումների ճակատագրից, որոնք XII դարի երկրորդ կեսին ենթարկվում էին Շահ-Արմենների հզոր ամիրայության ճնշմանը: Ինչպես վկայում է Վարդան Արևելցին, Շահ-Արմեն Սուլընան Բ-ն(1128-1185) «Էառ զԱմուկ ի Շետենկայ»³, այսինքն Խեղենեկյանների իշխանության տարածքային կորուստը պատահել է Ստեփանոս-Ալուգի որդի Խեղենեկ Բ-ի օրոք: Այս անցքի արձանագրմանը հետևում է Սասունի առնան մասին վկայությունը, հետևաբար կարելի է ենթադրել, թե խոսքը վերաբերում է միևնույն ժամանակ տեղի ունեցած դեպքերին: Եթե այս կոահումը համապատասխանում է իրականությանը, ապա Խեղենեկյանների իշխանության տարածքի խիստ սահմանափակումը տեղի է ունեցել XII դարի 70-ական թվականներին⁴:

Խեղենեկ Բ-ի դուստր Մարիամը, որը ժառանգել էր Խեղենեկյանների պատվար Աղթամարը, ամուսնացել էր Արծրունիների կրտսեր տոհմաճութերից մեկի ներկայացուցիչ Սեֆերինի հետ, և նրանց ժառանգները՝ Խեղենեկյան-Սեֆերինյանները պահպանեցին Աղթամարն ու այդտեղ հաստատված կաթողիկոսական աթոռը նաև հաջորդ դարերի ընթացքում⁵:

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 183: Յիմնվելով 1118-1180 թվականների բյուզանդական տիտղոսների յուրահատուկ սանդղակի վրա (տես A. P. Կաջдан, Социальная история состава господствующего класса Византии XI-XII вв., М., 1974, с. 112-113), Ստեփանոս-Ալուգ պրոտոկոլապաղատին պայմանականորեն կարելի է ընդգրկել Բյուզանդական կայսրության ավագանու նախավերջին չորրորդ խնդիր մեջ: Յնարավոր է, որ պրոտոկոլապաղատ է եղել դեռևս նրա հայրը, երբ Բյուզանդիայի հետ կապերն ավելի սերտ էին:

² Տես Թովմա Արծրունի և Ամանուն, էջ 345-348:

³ Վարդան Արևելցի, Պատմություն տիեզերական, ի լրս ընծայեաց Սկրտիչ Էմին, Սոսկվա, 1861, էջ 162:

⁴ Անհավանական է քվում, թե Ամյուլի գրավումը պատահել է 1130 թվականին (տես Վ.Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 254), քանի որ այդ կարող Շահ-Արմեն Սուլընան Բ-ն դեռևս ութամյա երեխան էր (տես Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան Երկրների մասին, կազմեց Յ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 219): Ամյուլի գրավումը XII դարի կեսերին է դնում Ա.Յովհաննիսյանը, բայց այդ գործողությունը բացահայտ վիճակում է Ելտկուց աթարեկին (տես Ա.Յովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 51): Քետազոտողն իրադարձությունները և դրանց ժամանակագրությունը ներկայացնելիս հիմնվում է Սիսիքար Այրիվանեցու հետևյալ վկայությունների վրա. «Ելտկուց աթարեկն էառ զԱմուկ ի Խալտենկայ եւ զՍասունը ի Վիրգենայ»(Սիսիքար Այրիվանեցի, Սոսկվա, 1860, էջ 63): Աղբյուրագիտական վերլուծությունից, սակայն, ակներև է դառնում, որ պատմիչի սխալներն առաջացել են Վարդան Արևելցու Սասունի ու Վասպուրականի իշխանությունների մասին տեղեկությունները համառոտելիս: Քետևաբար, վստահություն չի ներշնչում նաև Սիսիքար Այրիվանեցու հրամցրած ժամանակագրությունը:

⁵ Տես Ն. Ակիմեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարյա, Վիեննա, 1920:

Հարավային Հայաստանի պետական կազմավորումների կյանքում ամենակարևոր Սասունի Թոռնիկյանների¹ իշխանությունում ու նրա մատուցներում ծավալված անցուղարձերն էին: Սասունցիները Թոռնիկ Ա-ի գլխավորությամբ² XI դարի կեսերին հաջող հակահարված հասցրեցին սելջուկ-թյուրքերին, իսկ 70-ական թվականներին պայքարի մեջ մտան հայ իշխան Փիլարտոսի ու Մրվանյանների ամիրայության դեմ: Փիլարտոսի և Թոռնիկ Ա-ի բախումը փաստորեն հետմանազկերտյան ժամանակահատվածում բյուզանդական ժառանգության համար ծավալված պայքարի դրվագներից մեկն էր: Հակառակորդների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Սասունից զգալիորեն արևոտք, Հանձիտ գավառի Ալելուա դաշտում և ավարտվեց սասունցիների հաղթանակով³: Պատահական չէ, որ պարտված Փիլարտոսը, հաջորդ տարիներին, անկախ իշխանություն ստեղծելու նպատակով գործունեություն ծավալեց Կիլիկիային հարակից շրջաններում՝ կենտրոն ունենալով Մարաշը:

Ծուրջ 1073 թվականին, երբ Թոռնիկ Ա-ն զոհ գնաց Փիլարտոսի ու Մրվանյանների կազմակերպած ռավարությանը, նրա տիրույթները ժառանգեցին անչափահաս որդիները՝ Չորտվանելն ու Վասակը⁴: Այդ ժամանակաշրջանում Սասունի իշխանության և Բյուզանդական կայսրության միջև հաստատված փոխհարաբերությունները, որոնք հավանաբար ավելի վաղ ժամանակներից էին գալիս, առհասարակ բնութագրական

¹ Տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչ Թոռնիկ Ա-ին ուղղված չորս նամակներում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին նրան Մամիկոնյան է անվանում (տես Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 213-225): Սասունի իշխաններին, «տան Մամիկոնէցց» գիտե նաև Վարդան Արևելցին (տես Վարդան Արևելցի, էջ 147): Այդ պատճառով էլ ժամանակակից պատմագիտության մեջ տոհմը հաճախ կոչվում է «Սասունի Մամիկոնյան» կամ «Մամիկոնյան-Թոռնիկյան» (տես Է. Դաճիելյան, Տարոնի և Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյանները, «Պատմա-բանասիրական հանես», 1979, N 2, էջ 137-153, Յ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի, Երևան, 1982, էջ 17-34): Սինչեռ Մատթեոս Ուռհայեցին և նրա հետևողները բավարարվում են Սասունի տիրակալի հայրանվան Ծոլումով «Որդի Մուշեղայ Թոռնիկ», և չեն շոշափում տոհմային պատկանելության խնդիրը (տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 130, 206-210, Մըրատ Սպարապետ, Տարեգիր, Վենետիկ, 1956, էջ 55, 79-81): Պողոս Տարոնացին Թոռնիկ Ա-ի որդի Չորտվանել Ա-ին համարձակորեն կապում է երկու այլ նշանակոր տոհմերի հետ: Ըստ նրա, Չորտվանելը միաժամանակ և «յազգէ եւ ի շառաւիլէ Սեմեքերիմայ է յատորոց թագաւորացն», այսինքն Արծրունի է, և «յազգէն Արքահամու Թետուրական Արշակունի է շառաւիլէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» (Պողոս Տարոնացի, Թուղթ, էջ 274): Ինչպես Երևան է, Պողոս Տարոնացին այս ազգաբանությունը հյուսել է Մովսես Խորենացու Պատմության զանազան հատվածների հիման վրա ու նրա անվանակոչումները հնարավոր է հասկանալ և մեկնաբանել: Սասունավորապես, Արշակունիների ու Գրիգոր Լուսավորչի հետ Չորտվանել Ա-ի ազգակցությունը կարելի է բացատրել իշխանի «մայրենօք բնութեամբ» (նրա մայրն իրեն Արշակունի և Լուսավորչի ժառանգ հրչակող Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրն էր): Արծրունիների հետ տոհմակցությունը, թերևս, պայմանավորված է Հայկական Տավրոսի ամենանշանավոր տերերի Արծրունիների քաղաքական ժառանգորդ հանդես գալու հավակնություններով: Այսպիսով, Թոռնիկյանների իրական ծագումը վերջնականապես պարզաբանված չէ, Մամիկոնյանների կամ Արծրունիների հետ արյունակցական կապերը փաստարկված չեն: Նման պարագաներում գերադասելին տոհմը «Թոռնիկյան» կոչելը է (տես Ն. Ալիմեան, Թոռնիկեանք ի Սասուն, «Մատենագրական հետազոտություններ», հատ. Դ, Վիեննա, 1938, էջ 76-88), դեռևս ծերնպահ մնալով լրացուցիչ անվանումներից:

² Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 130-131, Մըրատ Սպարապետ, էջ 55:

³ Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 206-208, Մըրատ Սպարապետ, էջ 79-80:

⁴ Տես նույն տեղերում:

Ին կայսրության և տարածաշրջանի հայ ու օստար պետական կազմավորումների համար: Դնարավորություն չունենալով անմիջականորեն ազդել իրադարձությունների ընթացքի վրա՝ բյուզանդական տիրակալներն առայժմ բավարարվում էին իրենց հնարավոր դաշնակիցներին տիտղոսներ շնորհելով ու նախկին կապերը պահպանելով: 1101 թվականին Բյուզանդիայից անկախ՝ Զորտվանելը նովելիսիմոսի¹ տիտղոս էր կրում, որը բավականաչափ բարձր աստիճան էր դիտվում Բյուզանդիայում²: Այն հաճախ շնորհվում էր նաև «բյուզանդական աշխարհի» մեջ մտնող հարևան երկրների իշխողներին: Օրինակ, նովելիսիմոս էր Վրաստանի թագավոր Բագրատ Դ-ն (1027-1072), այդ տիտղոսն էր որոշ ժամանակ կրում նաև նրա որդի Գեորգի Բ-ն (1072-1089)³: Դատելով բյուզանդական տիտղոսներից՝ XII դարի երկրորդ կեսին Սաստիմի իշխանության քաղաքական կշիռը նույնիսկ կարելի է ամենաբարձրը համարել հայ տիրակալների շարքուն: Համեմատության համար վերիիշենք, որ Վասպուրականի Խենքնելյանների ստացած ամենաբարձր տիտղոսը պրոտոկյուրապաղատինն էր, իսկ Տաշիր-Զորագետի արքա Կյուրիկեն (մոտավորապես 1049-1089) ընդամենը կյուրապաղատ էր⁴:

Միջազգային հարաբերություններում Սասունի իշխանության դերի նշանակալիությունը պատկերավոր է արտահայտել ժամանակի ականավոր մատենագիր Պողոս Տարոնացին: Ըստ նրա, Զորտվանել Ա-ն էր «պատուեալ մեծաւ պատուով ի կայսերացդ հոռոնց»: Դարձեալ եւ ի պարսից թագաւորացն յամիրական օնկալեալ զիշխանութիւնս»⁵: Նման պայմաններում Սասունի տիրակալները պետք է ունենային ինչպես ռազմական հզրություն, այնպես էլ բավականաչափ դիվանագիտական հմտություն՝ պատվով դուրս գալու համար փորձություններից:

Խլ դարի 80-ական թվականներին տեղաշարժեր արձանագրվեցին սելջուկյան սուլթանների քաղաքականության մեջ: Մինչ այդ Այսրկովկասում նրանց հավատարիմ դաշնակից համարվող մահմեդական ամիրայություններն անմիջականորեն ենթարկվեցին կենտրոնական իշխանությանը: Ստեղծված պայմաններում Սասունի արտաքին քաղաքական կացությունը, կարելի է ենթադրել, նույնիսկ ժամանակավորապես բարելավվեց, քանի որ Թոռոնիկյանների վաղեմի հակառակորդ Դիարբեքիրի Մրվանյանների տիրույթների մեջ մասը 1086 թվականին միացվեց «Սեծ սելջուկների» սուլթանությանը⁶: 1096 թվականին մահացավ Մրվանյան վերջին ամիրան, և Սասունի տիրակալն (անշուշտ, Չորտվանել Ա-ն) ձեռք բերեց նրա վերահսկած տարածքի մի մասը՝ երեսում գյուղ շրջակա բնակութենու անտառներով:

¹ Στίν Πηλήπου Σωρονιαρχή, θιοτερό, τε 274: τε 13-πιάς Νικούν τητητηρούρο υπρέψως ε «Νικούλερυσμάνου» δίκαιη:

² Stú . . , ..., . 109-110:

³ Տե՛ս Հ. Տեղյանի, XI-XII և Աշուած Եղիանի սահմանագիրը՝ Աշուած Եղիանի մասին պատմությունը՝ կազմակերպված է Աշուած Եղիանի աշխատանքների մասին պատմություններով:

⁴ Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Զորագետ, Երևան, 1982, էջ 95-97:

⁵ Στίχος Πονηρού Σωτηριακού, Θουτηρά, έζ 274:

⁶ К. Босворт. Мусульманские династии. М., 1971. с. 88.

⁷Տես Յան Ժողովորի ապահովություն(ՀՀ ԳԱԱ իրադա). իատ. III. Եռևան. 1976. էջ 485-486:

Մրվանյանների ամիրայության վերացումը, սակայն, խթան դարձավ ավելի հզոր թշնամու՝ Շահ-Արմենների պետության բուռն վերելքի համար: Սուքման Բ-ի օրոք այդ ամիրայությունը դարձավ Սասունի գլխավոր հակառակորդը: Այդ ժամանակաշրջանում¹ Սասունում իշխում էր պրոտոնովելիսիմոս² Վիգենը՝ Զորտվանել Ա-ի որդին, որը սերտ կապեր էր հաստատել Հարավային Հայաստանի իշխանական տների վերջին ժառանգների հետ: Նա ամուսնացել էր Մոկաց մեծ իշխան Հնայակի դստեր՝ Մելքքսիի (Մելքքսիթի)³ հետ, իսկ դստերը՝ Կատային, կնության էր տվել Կամենասյանների տոհմից Շահնշահին⁴: Նրա ազգակցական կապերը դուրս էին գալիս անգամ Հարավային Հայաստանի սահմաններից, քանի որ որդին՝ Զորտվանել Բ-ն ամուսնացել էր հայոց կաթողիկոս Գրիգոր Գ-ի (1113-1166) եղբոր դուստր Վանինեի հետ⁵: Ամուսնական այդ կապն էլ, թերևս, հետագայում բախտորոշ դեր խաղաց՝ պայմանավորելով Սասունի տերերի սերունդների անցումը դեպի Կիլիկիա:

Սասունի իշխանության և Շահ-Արմենների միջև ընթացող հարատև մարտերի մասին միայն մեկ դրվագ (ընդ որում ակնհայտորեն վերցված ժողովրդական վեպից)⁶ պահպանվել է Վարդան Արևելցու «Պատմությունում»: Պատմիչը, հաղորդելով Վիգենի հաղթանակի ու հակառակորդների միջև հաշտության կնքման մասին («կալեալ տանի

¹ Վիգենի կառավարման սկիզբը ստույգ հայտնի չէ: Վ. Պետոյանի առաջարկած 1127 թվականը (տես Վ.Պետոյան, Սասունի Թոռնիկյան իշխանությունը, ՀՀ ԳԱԱ «Տեղեկեգիր» (հաս.գիտ.), 1955, N 2, էջ 87-88) Շահ-Արմենների ժամանակագրության ակնհայտ գուգահեռն է, զուրկ փաստական հիմքից: Այնուամենայնիվ, դժվար է կասկածել, որ XII դարի 30-ական թվականներին, երբ մարտեր ծավալվեցին Սուրբան Բ-ի և Սասունի տիրակալի միջև, Վիգենը իրոք փոխարինել էր իրոք: Յիրավի, 1073 թվականին դեռևս անշափահաս Զորտվանել Ա-Ռ 1133-34 թվականին ինքնուրույն տիրակալ դարձած Սուքման Բ-ի (տես Հայ ժողովրդի պատմություն, հատ. III, էջ 487) կառավարման սկզբում պետք է ծերացած լիներ և գոնեազամական գործերը անցած Վիգենին:

² XII դարի Սասունի իշխանության մասին գլխավոր աղբյուր համարվող 1169 թվականի հիշատակարանի որոշ հրատարակություններում (տես Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 391) բյուզանդական տիտղոսը հանդիպում է «պատուելիսիմոս» ձևով: Եթենց այդպես էլ անվանվում է Վիգենը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակությունում (հատ. III, էջ 486), հավանաբար հայերեն «պատուելի» բառի հետ ինչ-որ մտազուգորդումով: Տիտղոսի բյուզանդական հիմքը չի Վիգենը Ղ. Ալիշանի ուշադրությունից (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 391, ծան. 6), իսկ վերջնական ճշտում-բացատրությունը տվել է Յ. Բարթիկյանը (տես H. Bartikian, նշվ. աշխ., էջ 270, ծան. 48):

³ Տես Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 194: Ուշագրավ է, որ հիշատակարանում Մելքքսիի ծննդարանությունն այնպես է ներկայացված, որ նա ևս համարվում է երկու նշանավոր տոհմների ժառանգ. «յազգէ Արծրունի եւ ի շառաւելէ սրբոյն Վարդանայ», այսինքն՝ միաժամանակ և Արծրունի, և թե Մամիկոնյան: Կարելի է, իհարկե, ենթարկելոր հոր կողմից նա Արծրունիների որևէ տոհմաճյուղից է (հնան). Հայ ժողովրդի պատմություն, հատ. III, էջ 483, 486), իսկ մոր կողմից սերում էր Մամիկոնյանների ընտանիքի մնացորդներից: Ժամանակաշրջանի յուրահատուկ արձագանքն է Մելքքսիի տիպիկ արևելյան անձնանունը, որի բառացի նշանակությունն է «հրեշտակ» + «տիլկին» (տես Շ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 298):

⁴ Տես Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 196:

⁵ Տես նույն տեղում, էջ 195-196:

⁶ «Սասուն ծռերի» զանազան պատումներում առատ նյութեր կան XII - XIII դարերում Հայաստանի տարբեր մասերում հաստատված մահմեդական այն ամիրայությունների դեմ Հարավային Հայաստանի իշխանությունների մղած հերոսական մարտերի մասին: Այդ պատմական իրադարձությունների արձագանքների վերհանումը հատուկ հետազոտություն է պահանջում:

զնա յամուրն իւր եւ զկնի աւուրց արձակէ ուխտիւ եւ Երդմամբ սիրոյ»)¹, հաջորդ իսկ Վկայությամբ հակասական տեղեկություն է հաղորդում. Շահ-Արմենը խլում է Վիգենից Սասունը և «ամենայն վաճօրէիւրն պահէր ի խոր խաղաղութեան զամս վաթսուն²»: Այս վերջին հաղորդումը ծիշտ լինել չի կարող, քանի որ նախ Սուլման Բ-ն այդքան տարի չի էլ իշխել: Ապա՝ հիմնվելով այլ, այդ թվում նաև ոչ հայկական սկզբնաղբյուրների վրա, համոզված կարելի է պնդել, որ Վիգենը Շահ-Արմենի հետ կնքված պայմանագրով («ուխտիւ եւ Երդմամբ սիրոյ») պահպանել է վերահսկողությունը գոնե Սասունի մի մասի նկատմամբ: Վիգենի իշխանության վերջին տարիներին պայքարն այն աստիճան օրիհասական բնույթ է ընդունել, որ Վիգենը հարկադրված է եղել մահմեդականություն ընդունել³: 1176 թվականին, Վիգենի մահից հետո⁴, նրա թոռներից Շահնշահը (վերջինիս հայոց Զորովանել Բ-ն տարածամ մահացել էր 1165 թվականին)⁵ հավանաբար կախվածության մեջ էր գտնվում Շահ-Արմենից և կառավարում էր Սասունը որպես կիսանկախ տիրակալ: Այդ տպավորությունն է ստեղծվում Վարդան Արևելցու տեղեկություններից: Դաղորդելով Սուլման Բ-ի մահվան մասին՝ պատմիչն ավելացնում է. «Եւ զի թոռն Վիգենայ Շահնշահ, քեռորդի տեառն Գրիգոր կաթողիկոսի առջնթեր կայր մահուան Շահին՝ առեալ զիւրս՝ գան անկանին ի Սասունք»⁶: Ստացվում է, որ Շահնշահը գտնվել է Շահ-Արմենի արքունիքում, ընդ որում պարզ է, որ դա յուրօրինակ կարգավիճակի արտացոլում պետք է լիներ: Շահ-Արմենի մահից հետո յուրայինների (հավանաբար, սասունցիներից կազմված ռազմիկների) ջոկատով նա անմիջապես մեկնել է Սասուն: Այստեղ Շահնշահին հաջողվել է ձերբակալել Շահ-Արմենների ամիրայության փաստական ժառանգորդ Բեկրամուլին, որն ազատություն է ստացել Շահնշահին զիջելով Թառձյան բերդը: Բեկրամուլը, սակայն, Շահ-Արմենների գահին ամրապնդվելուց հետո Շահնշահից ոչ միայն ետ է խլել Թառձյանը, այլև «զամենայն Սասունք եհան ի նմանէ եւ արկ ընդ հարկաւ գեկեղեցիս եւ գուխտու»⁷: Քետևաբար, Վարդան Արևելցու վկայությունների ամբողջությունից ևս բխում է, որ Սասունի վերջնական անկումը տեղի է ունեցել Սուլման Բ-ի մահից հետո, իսկ մինչ այդ Թոռնիկյանները որոշակի իրավունքներ են պահպանել Սասունի նկատմամբ: Այսպես՝ արար պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ «սասունցիք (Սանասինա), որոնք նույնպես հայեր են, սակայն անառիկ բերդեր ունեն

¹ Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 162:

² Նույն տեղում, էջ 162-163:

³ Անառուն Եթսասցի, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջարան եւ Ժամանակագրություններ L. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 132-133: Վիգենի ուրացությունը, որի մասին լրում են հայ հեղինակները, անշուշտ պատահել է 1169 թվականից հետո, քանի որ 1169 թվականի հիշատակարանի հեղինակը դեռևս պարծանքով է հիշատակում Վիգենի եկեղեցաշինական գործունեությունն ու բարեպաշտությունը:

⁴ Տե՛ս Ստեփանոս Օքբելյան, Ժամանակագրութիւն, Երևան, 1942, էջ 19:

⁵ Տե՛ս Դայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 196-197:

⁶ Վարդան Արևելցի, էջ 174:

⁷ Նույն տեղում: Բեկրամուլի գերի ընկնելը և Երդմամբ ու խոստումներով ազատվելը նշում է նաև Միխայել Ասորին (տե՛ս Michel le Syrien, Chronique, t. III, Paris, 1905, p. 396):

Խլաթի մոտ և դաշինք՝ կնքված Խլաթի տիրոջ հետ: Այդ բերդերը, ըստ պայմանագրի, իրենց ձեռքում պահեցին ինքուրույն կերպով, մինչև իհնագ հարյուր ութսուն թվականը (1184-1185), երբ մահմեղականները դրանք գրավեցին, և թոռնիկյանները հեռացան այնտեղից, ինչպես իհշելու ենք կամոքն ալլահի¹: Թեև հեղինակը չի կատարել իր խոստումը և իհջոր 580 թվականին (14 ապրիլի 1184- 3 ապրիլի 1185) հատկացված բաժնում Սասունի գրավման մասին որևէ տեղեկություն չի հաղորդել², բայց պարզ է, որ այդ վրիպումը պատահական չէ ու մինչև 1185 հունիսի Սուլքման Բ-ի մահը, այդ իրադարձությունը տեղի ունենալ չէր կարող: Մյուս կողմից՝ հայտնի է, որ Բեկրա մուրը բավականին արագ տիրեց նախաձեռնության ու վերականգնեց Շահ-Արմեն-ների պետության վերահսկողությունը ամիրայության ողջ տարածքում³, հետևաբար արաք պատմիչի ժամանակագրական մեղանչումն աննշան պետք է լինի: Սասունի թոռնիկյանների և Շահ-Արմենի միջև որոշակի համաձայնության գոյության մասին են վկայում նաև ասորական աղբյուրները, թեև դրանք այլ կերպ են ներկայացնում կողմերի միջև պայմանավորվածության շարժառիթները: Ըստ Անանուն Եղեսացու՝ «հայերը իհնագ տարուց ի վեր բախման մեջ էին Նվիրկերտի և Մարդինի թուրքերի»⁴, ասել է թե այդ քաղաքներին տիրող Արտուրյան ամիրաների հետ: Հակառակորդի ճնշմանը և սովոր չղիմանալով է, որ Սասունի տերերը իրենց բերդերը հանձնել են Շահ-Արմենի⁵: Նվիրկերտի ամիրայի հարձակումներով է Սասունի հայերի գիշումը բացատրում նաև Միխայել Ասորին և նախորդի պես ավանդում իրադարձությունների տարեթիվը՝ 1174 թվականը⁶:

Ուշագրավ է, որ Անանուն Եղեսացին ևս անուղղակիորեն խոսում է Շահ-Արմենի ուխտադրության մասին: Ըստ նրա, Վիգենին, որը Սասունի լեռան և բերդերի տերն էր, ապրուստի համար տրվել է ընդամենը մի քանի գյուղ: Անգամ Վիգենի հուսահատ փորձը մահմեղականություն ընդունելու միջոցով որևէ բերդ ստանալու ուղղությամբ, հաջողություն չի ունեցել⁷:

Ասորի հեղինակների վկայություններից մակաբերվող ժամանակագրությունը (1169 թվական՝ մարտերի սկիզբ, 1174 թվական՝ Վիգենի և Շահ-Արմեն Սուլքման Բ-ի միջև համաձայնության տարեթիվ) իրականությանը միանգամայն մոտ է թվում, բայց

¹ Իբն ալ-Ասիր, քարգմանություն բնագրից, առաջարան ու ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնյանի, Երևան, 1981, էջ 212 (ընդգործումն իման է - Ր.Ս.): Պատմիչն, անշուշտ, նկատի ունի Վարդան Արևելցու վերոհիշյալ «ուխտն եւ երդումն սիրոյ»:

² Տես Իբն ալ-Ասիր, էջ 391, ծան. 231:

³ Տես Յ. Մարգարյան, Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.), «Պատմա-քանասիրական հանդես», 1989, N 1, էջ 36-37:

⁴ Անանուն Եղեսացի, էջ 133:

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, էջ 476: Անանուն հեղինակը, Սասունի դեպքերի մասին ավանդելուց հետո, խոսում է միկնույն տարում վրացական գործերի կողմից Անին գրավելու մասին: Քանի որ խոսքը վերաբերում է 1174 թվականի Անիի գրավմանը, ապա Սասունի և Խլաթի տերերի միջև համաձայնությունը ևս թվագրվում է 1174 թվականով:

⁷ Անանուն Եղեսացի, էջ 133:

կասկած է հարուցում Սասունի իշխանության ինքնուրույնության և հղորության բացարձակ անհետացման այն վիճակը, որ պատկերում են նրանք: Դամենայն դեպս, ավելի արժանահավատ են թվում Իբն ալ-Ասիրի հանգանանալից հաղորդումները:

Այսպիսով, 1185/86 թվականը շրջադարձային էր Հարավային Հայաստանի պատմության մեջ այն առումով, որ ավարտին հասավ այդ հինավուրց հայկական տարածքում բնիկ տիրողների հիմնական մասին իշխանությունից զրկելու գործընթացը:

Երկրի հարավում հայ երմիկ տարրի քաղաքական իշխանության որոշակի անրապնդում դիտվեց միայն շուրջ մեկ դար անց, որ բացատրվում էր մոնղոլական գերիշխանության շրջանակներում հայերի ռազմական հղորության աճով: Այսպէս XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբին հայոց քաղաքական իշխանության վերապրման ուշագրավ փաստեր են հանդիպում նաև Հայաստանի հարավ-արևմտյան և հարավային գավառներում, օրինակ, Ակնի և Զնշկածագի միջև ընկած շրջաններում, որտեղ գոյություն ուներ ստվարաթիվ հայ քաղկեդոնական բնակչություն, կառավարում էին Խավասաների տոհմի ներկայացուցիչները¹: Սևուն ուշադրության է արժանի Արուլ Ֆարաջի այն հաղորդումը, որի համաձայն մինչև 1290 թվականը (ո՞ր թվականից սկսած մնում է անհայտ) հայ տիրակալ էր իշխում Մուշ քաղաքում²:

Միաժամանակ՝ զարգացած ավատատիրության դարաշրջանում առաջին անգամ երկրի հյուսիս ու հարավը հայտնվեցին տարբեր ռազմավարչական միավորումների Գյուղիսատանի և Մեծ Հայքի վիլայեթների կազմում: Կտրուկ նվազեցին տնտեսական և քաղաքական կապերը Հայաստանի այդ երկու մասերի միջև, քանի որ այլ էին տիրապետող դասակարգի կենսագործունեության պայմանները, զանազանվում էին քաղաքների ու միջազգային տարանցիկ առևտուի ճակատագիրը հյուսիսում և հարավում: Հայ ավատատիրական ավագանու շրջանում դադարում են հանդիպել ընտանիքներ, որոնք ի վիճակի լինեին գործունեություն ծավալել և տիրույթներ ունենալ միաժամանակ երկրի հարավային ու հյուսիսային հատվածներում. Երևոյթ, որը սովորական էր նախորդ դարերի ընթացքում: XII դարից մինչև XIV դարի առաջին կեսը անխտիր բոլոր հայ ավատատիրական տոհմերը գործում էին անձուկ աշխարհագրական շրջանակներում, ընդ որում դրանք անվերջ սահմանափակվում էին և ուղղակի հեղձուցիչ դաշնում XIII դարի երկրորդ կեսին և հատկապես XIV դարի առաջին կեսին: Յյուսիսային ու Հարավային Հայաստանի՝ քաղաքական առունու միջնացից անջրպետվելու պարագայում համազգային խնդիրներ դրվել և առավել և լուծվել այլև չէին կարող:

¹Տե՛ս P. M. Бартикян, О византийской аристократической семье Гаврас, III, «Историко-филологический журнал», 1988, N 1, с. 163-169:

²Տե՛ս Gregory Abul Faraj, The Chronography, London, 1976, p. 484:

Հայրապետ Մարգարյան, Քաղաքական գործնթացները Հարավային Հայաստանում XI դարի վերջերին և XII դարում – Բյուզանդիայի աղետալի պարտությունը 1071 թվականին Մանազ-կերտի ծակատամարտում կանխորշեց քաղաքական գործնթացների հետագա ընթացքը Հարավային Հայաստանում: Բյուզանդիան աստիճանաբար զիջում էր դիրքերը, իսկ հայկական քաղաքական կազմավորումները հոգեվարք էին ապրում: Այսպես՝ Տարոնի Մամիկոնյանները հարկադրված էին տեղափոխվել Կիլիկիա, իսկ Դեգիքի Կեկավմենոսները մեծ դժվարությամբ էին պահպանում իրենց դիրքերը: Վասպուրականի Խեղենեկյանները և Սասունի Թռոնիկյանները մեծ կորուստների գնով միայն կարողացան պահպանել իրենց տիրույթները մինչև XII դարի 70-ական թվականները: 1185/86 թվականին Հարավային Հայաստանի բնիկ տիրողների հիմնական մասին իշխանությունից զրկելու գործնթացը հասավ իր ավարտին :

Այրապետ Մարգարյան, Политические процессы в Южной Армении в конце XI-XII веков – 1071 .

70- XII .

прекратили сопротивление и владетели Сасуна. 1185/1186 г. оказался переломным в истории

Hayrapet Margaryan, The Political Processes in South Armenia at the end of XI-XII Centuries –
The disastrous defeat of the Byzantine army in 1071 near Manzikert defined the political processes of South Armenia. The Byzantine Empire, step by step, was losing its positions in the region, while the Armenian authorities were in agony. Thus the Mamikonyan principals in Taron had to move to Cilicia, and Kekavmens of Degik were holding their positions with great difficulty. Until 70's of XII century the heirs of Artsruny – Khedenekyans managed to keep their positions, although in its much reduced forms. The Armenian noble family of Tornikyan of Sasun stops the resistance almost at the same period of time. 1185/1186 was a turning point in the history of South Armenia – the ancient Armenian feudal lords of the region totally lost their political power.

Հայրապետ Մարգարյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ

